ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-22873 «30» 10 2019թ.

«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Գ. ՓՈԿՐԻԿՅԱՆԻՆ
ք. Գավառ, Բոշնաղյան 1-ին նրբ. 8

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.06.2019 թվականին կնքված «ԵՔ–ԳՀԱՇՁԲ–19/41-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով», որի վերջնաժամկետը լրացել է 10.08.2019 թվականին և Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Է. Կիրակոսյան
011 514-129